

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ընտրական օրենսգրքում և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին

ՀՀ Ազգային ժողովի օրակարգում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, ինչպես նաև մի շարք այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը, որոնք 24.10.2024 թ. ընդունվել են ԱԺ-ի կողմից առաջին ընթերցմամբ: Թե առաջին ընթերցմամբ ընդունված նախագծերը և թե առաջինից երկրորդ ընթերցում ընկած ժամանակահատվածում առաջարկվող մի շարք կարգավորումներ, մեր գնահատմամբ, ինդրահարույց են և ոչ բավարար հիմնավորված:

«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք

1. Ներկայումս ֆիզիկական անձինք համայնքների համամասնական ընտրությունների նախընտրական հիմնադրամներին կարող են փոխանցել առավելագույնը 100,000 ՀՀ դրամ, 500,000 ՀՀ դրամ կամ 1 մլն ՀՀ դրամ կախված թե որ համայնքում է ընտրությունը և արդյո՞ք ֆիզիկական անձն ունի թեկնածուի կարգավիճակ, թե ոչ: Մասնավորապես համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու ընտրությունները կարգավորող՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ֆիզիկական անձ կարող է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամներում կատարել մինչև նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով նվիրատվություն: Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն կարող է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամներում կատարել մինչև նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով նվիրատվություն, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող մյուս համայնքների ավագանիների ընտրություններում մինչև նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափով նվիրատվություն»:*

Ընտրական օրենսգրքի փոփոխությունների [Կ-927-26.09.2024-ՊԻ-011/1](#) նախագծի հոդված 22-ի համաձայն՝ *«Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամը ձևավորվում է այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցությունների) կատարած մուծումներից»:* Այսինքն, առաջարկվում է նախընտրական հիմնադրամ մուծումներ կատարել բացառապես կուսակցությունների ընթացիկ հաշվեհամարներից: Այս փոփոխության նպատակը ֆինանսական միջոցների աղբյուրների օրինականության վերահսկողության կենտրոնացումն ու պարզեցումն է:

Նախընտրական հիմնադրամներին ֆիզիկական անձանց՝ նվիրատվություն կատարելու հնարավորությունը վերացնելը ոտնահարում է ընտրելու իրավունք ունեցող, բայց ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց իրավունքները: Ներկայում, համաձայն «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի, *«նվիրատվություններ չեն թույլատրվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանցից»*, այսինքն առկա է ՀՀ քաղաքացի լինելու պահանջ կուսակցությանը նվիրատվության համար, սակայն համայնքային ընտրություններում ընտրելու իրավունք ունեցող, բայց ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինք կարող են կատարել նվիրատվություն նախընտրական հիմնադրամներին՝ հաշվի առնելով, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով *«կուսակցության նախընտրական հիմնադրամը ձևավորվում է այդ թվում ընտրելու իրավունք ունեցող անձանց նվիրատվություններից»*:

Առաջարկվող փոփոխություններով ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինք, որոնք ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, չեն կարող գումար փոխանցել կուսակցությանը, ներդրում ունենալ նախընտրական քարոզչության մեջ և այս կերպ իրացնել իրենց արտահայտվելու և միավորման ազատությունը: Այս հակասությունը վերացնելու համար կ'ամ պետք է քաղաքացիություն չունեցող անձանց հստակ գրկել համայնքային ընտրություններում ընտրելու/ընտրվելու իրավունքից, կ'ամ վերացնել նրանց համար նախատեսվող սահմանափակումը: Մեր կարծիքով հիմնավորված չէ նրանց՝ մի կողմից ընտրական իրավունք տալը, մյուս կողմից դրանից լիարժեք օգտվելու հնարավորությունից զրկելը:

Բացառապես կուսակցությունների հաշվեհամարներից նախընտրական հիմնադրամ մուծումներ կատարելու պահանջը նաև կարող է սահմանափակել ՀՀ քաղաքացի հանդիսացող այն անձանց իրավունքը, որոնք չեն ցանկանում որևէ կուսակցության նվիրատվություն անել, սակայն ընտրական գործընթացում պատրաստ են սատարել մրցակցող քաղաքական ուժերի դաշինքին կամ ցանկանում են նպատակային ներդրում ունենալ հենց նախընտրական քարոզչության ֆինանսավորման մեջ:

Մեր կարծիքով, իրավունքներ սահմանափակող այսպիսի եական փոփոխությունները հապճեպ են, բավարար չքննարկված և չհիմնավորված:

2. «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխությունների առաջին ընթերցմամբ ընդունված Կ-927-26.09.2024-ՊԻ-011/1 նախագծի 4-րդ հոդվածի համաձայն՝ կուսակցության տարեկան նվիրատվությունների սահմանաչափերը չեն կարող գերազանցել՝ *«սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրհազարապատիկը, այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկը»*: Նույն հոդվածի համաձայն՝ *«նվիրատվությունների առավելագույն սահմանաչափը չի ներառում Ազգային ժողովի ընտրությունների դեպքում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում մեկ ֆիզիկական անձի կողմից ընտրություններին մասնակցող (այդ թվում կուսակցությունների դաշինքի միջոցով) կուսակցությանը տրվող առավելագույնը նվազագույն աշխատավարձի 5000-ապատիկի չափով գումար*

հանդիսացող նվիրատվությունները, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում մեկ ֆիզիկական անձի կողմից ընտրություններին մասնակցող (այդ թվում կուսակցությունների դաշինքի միջոցով) կուսակցությանը տրվող առավելագույնը նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով գումար հանդիսացող նվիրատվությունները»:

Ընտրության տեսակը	Գործող Ֆիզիկական անձի / ավագանու անդամի թեկնածուի նախընտրական քարոզչության ֆինանսավորման նվիրատվության գործող սահմանաչափը (ՀՀ դրամ)	1-ին ընթերցում անցած Ֆիզիկական անձի նախընտրական քարոզչության ֆինանսավորման առաջարկված սահմանաչափը (ՀՀ դրամ)	Առաջարկված փոփոխություններով սահմանաչափերի աճը
Երևանի ավագանու ընտրություններ	100,000 / 1,000,000	1,000,000	Ֆիզ. անձանց համար՝ 10-պատիկ աճ Թեկնածուների համար՝ չի փոխվել
Համամասնական ընտրակարգով անցկացվող մյուս համայնքների ավագանիների ընտրություններ	100,000 / 500,000	1,000,000	Ֆիզ. անձանց համար՝ 10-պատիկ աճ Թեկնածուների համար՝ 2-պատիկ աճ

Հետևաբար, առաջին ընթերցմամբ ընդունված դրույթը նախընտրական հիմնադրամի նվիրատվությունների համար սահմանված բոլոր սահմանաչափերը բարձրացնում է 2-10 անգամ:

3. Առաջինից երկրորդ ընթերցում փուլում դիտարկվում է կուսակցությունների ֆինանսավորման սահմանաչափը 2 անգամ բարձրացնելու հնարավորությունը: Մասնավորապես առաջարկվում է կուսակցությունների կողմից ֆիզիկական անձանցից ստացվող նվիրատվությունների, մուտքի վճարների և անդամավճարների սահմանաչափը 500 մլն ՀՀ դրամից (ներառյալ նվիրատվությունները, անդամավճարները և մուտքի վճարները) դարձնել 1 մլրդ ՀՀ դրամ: Այս փոփոխությունը բացատրվում է նրանով, որ առկա սահմանաչափը ցածր է և թույլ չի տալիս կուսակցություններին կայանալ ու զարգանալ:

Մեր կարծիքով առաջարկվող փոփոխությունը բավարար հիմնավորված չէ և կարող է խոչընդոտել ժողովրդավարության համար կարևորագույն՝ հավասար մասնակցության և մրցակցային կուսակցական համակարգ ձևավորելու հանձնառություններին, հանրային շահի գերակայության սկզբունքին:

Վերջին երկու տարիներին (2022, 2023) կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ուսումնասիրությունը 2024 թվականի հունիսի տվյալներով ցույց է տալիս հետևյալ պատկերը.

2022 թ. ամենաշատ մուտքեր ունեցող կուսակցություններն են ԶՊ-ն, ՀՀԿ-ն, ՀՅԴ-ն, Ապրելու երկիրը և Վերածնվող Հայաստանը:

Կուսակցություն	Տարեկան մուտքեր (ՀՀ դրամ)
ԶՊ	463,770,801
ՀՀԿ	204,111,144
ՀՅԴ	159,296,377
Ապրելու երկիր	69,879,200
Վերածնվող Հայաստան	64,226,868

Ինչպես երևում է, տարեկան 500 մլն ՀՀ դրամ սահմանաչափի թվին մոտ ընդամենը մեկ կուսակցություն է՝ ԶՊ-ն, ընդ որում տվյալ կուսակցության մուտքերում ներառված է նաև պետական ֆինանսավորումը՝ շուրջ 200 մլն ՀՀ դրամի չափով, որը նվիրատվությունների տարեկան սահմանաչափի մեջ չի մտնում: Այսինքն 2022 թվականի տվյալների համատեքստում՝ սահմանաչափը բավական բարձր է, ոչ մի կուսակցություն դրան մոտ գումարի նվիրատվություն չի ստացել և չի բախվել սահմանաչափի ցածր լինելու հանգամանքով պայմանավորված խնդիրների:

2023 թ. ամենաշատ մուտքեր ունեցող կուսակցություններն են ԶՊ-ն, Ապրելու երկիրը, ՀՀԿ-ն, Հայրենիքը և ԲՀԿ-ն:

Կուսակցություն	Տարեկան մուտքեր (ՀՀ դրամ)
ԶՊ	927,862,312
Ապրելու երկիր	233,901,175

ՀՀԿ	197,550,314
Հայրենիք	70,158,180
ԲՀԿ	58,574,019

2023 թվականի պատկերից երևում է, որ սահմանաչափի թվին մոտ գումար կրկին ունեցել է միայն ԶՊ-ն, այն էլ՝ Երևանի ավագանու ընտրությունների համատեքստում՝ կազմակերպելով դրամահավաք, որտեղ գումարները հավաքվել են կուսակցական հաշվեհամարում, այնուհետև փոխանցվել հիմնադրամին: ԶՊ-ն Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ծախսել է 298,618,899 ՀՀ դրամ (մոտ 300 մլն ՀՀ դրամ, որը Երևանի ավագանու ընտրություններում նախընտրական հիմնադրամի ծախսերի օրենքով սահմանված առավելագույն չափն է), իսկ կուսակցության տարեկան մուտքերի մոտ 200 մլն ՀՀ դրամը կրկին պետական ֆինանսավորումն է, ստացվում է որ ԶՊ-ի՝ 2023 թ. մուտքերը նվիրատվություններից կազմել է մոտ 400 մլն ՀՀ դրամ (ըստ հաշվետվությունների՝ կուսակցությունը վարձակալության հանձնելուց, ավանդից կամ այլ աղբյուրներից մուտք չի ունեցել):

Երկրորդ առավել գումար ստացած կուսակցությունը՝ Ապրելու երկիրն է, որը ևս մասնակցում էր Երևանի ավագանու ընտրություններին ու կատարել էր զգալի ծախսեր, սակայն նրա կուսակցության հաշվեհամարի տարեկան մուտքերը էապես քիչ են, այսինքն կուսակցությունը սահմանաչափի հետ կապված խնդիրների չի բախվել:

Վերոնշյալն ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ կուսակցությունները հիմնականում չեն կարողանում հավաքել սահմանաչափին մոտ գումար: Նրանց մուտքերի զգալի մասը կազմում է պետական ֆինանսավորումը, և նույնիսկ այդ թվի ներառմամբ կուսակցությունները հեռու են 500 մլն ՀՀ դրամ տարեկան մուտք ունենալուց: Այն պնդումը, թե կուսակցությունների համար եղած սահմանաչափը կաշկանդող է և սահմանաչափի բարձրացումը կնպաստի ֆինանսավորման անկախությանը, հիմնավոր չէ: Նույնիսկ նախընտրական հիմնադրամների մուտքերը կուսակցությունների հաշվից կատարելու պարագայում սահմանաչափերի առաջարկվող բազմապատիկ աճը հիմնավորված չէ:

Վերոնշյալ գործոններն անտեսելով՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից սահմանաչափի բարձրացումը կարող է թերևս ինչ-ինչ հանգամանքներում նպաստել մեկ-երկու կուսակցության, հիմնականում ԶՊ-ի, ֆինանսական հնարավորությունների ավելացմանը, սակայն մյուս կուսակցությունների համար հնարավորությունները հիմնականում չեն ավելանա, ինչը կհանգեցնի անհավասարության ճեղքի մեծացմանը, քաղաքական դաշտի մոնոպոլիզացմանը, ինչն արդեն իսկ եղել է Հայաստանում մինչև 2018 թվականը և հանրային շահի ոտնահարմանը՝ ի օգուտ խոշոր կապիտալի կամ օտարերկրյա շահերի: Սահմանաչափերի բարձրացումը կարող է հանգեցնել նաև նրան, որ մի քանի խոշոր գործարարներ կարող են պարզապես «գնել» մի շարք կուսակցությունների և ծառայեցնել նրանց իրենց մասնավոր շահին:

4. Առաջինից երկրորդ ընթերցում փուլում նաև առաջարկվել է 4 անգամ բարձրացնել մեկ անձի կողմից մեկ կուսակցությանը և 40 անգամ՝ մեկ անձի կողմից բոլոր կուսակցություններին մուծվող տարեկան նվիրատվության չափը՝ բարձրացնելով առաջինը 2,5-ից մինչև 10 մլն ՀՀ դրամ, որը կարող է փոխանցվել մինչև 10 կուսակցությունների: Այս փոփոխությունը ևս բավարար հիմնավորված չէ և կարող է հնարավորություն տալ մեծ ծավալներով ապօրինի անուղղակի ֆինանսավորման, օրինակ՝ իրավաբանական անձանցից կամ օտարերկրյա աղբյուրներից, որը կարող է կուսակցություններին դնել մասնավոր շահի և/կամ արտաքին ուժերի ներգործության և ռիսկերի գոտում, ինչպես նաև իր հերթին մեծացնել կուսակցությունների միջև անհավասարությունն ու խաթարել հավասար մրցակցային պայմանները:

Տրամաբանական է, որ ֆիզիկական անձանց կողմից կուսակցություններին մուծվող նվիրատվությունների սահմանաչափերը որոշելիս որոշակիորեն հաշվի առնվի երկրում մեկ անձի ամսական միջին եկամուտը: Վիճակագրական կոմիտեի տվյալներով¹ Հայաստանում միջին ամսական աշխատավարձը 2024 թվականին տատանվել է 260,000-310,000 ՀՀ դրամի սահմաններում, ինչը միջինացված տարեկան կազմում է շուրջ 3,4 մլն ՀՀ դրամ¹: Միաժամանակ, Հայաստանում նվազագույն աշխատավարձը օրենքով սահմանված է 75,000 ՀՀ դրամ, որն արտացոլում է երկրում ընդհանուր բարեկեցության մակարդակը: Նման սոցիալ-տնտեսական պայմաններում եզակի անձինք են կարող 10-100 մլն ՀՀ դրամ նվիրատվություն կատարել կուսակցություններին և նրանք, ամենայն հավանականությամբ, կլինեն բիզնես համայնքի բարձրաստիճան ներկայացուցիչներ, որոնք սովորաբար առավել հակված են նվիրատվություն անելու իշխող կուսակցությանը: Առավել վտանգավոր կարող է լինել օտարերկրյա անուղղակի ֆինանսավորումը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի առաջինից երկրորդ ընթերցում փուլում առաջարկվում է բնեղենով նվիրատվությունը չդիտարկել սահմանված սահմանաչափերի մեջ: Մասնավորապես առաջարկվում է անշարժ գույքի նվիրատվության համար սահմանել տարեկան 25 մլն սահմանաչափը: Ելնելով հավասար և մրցակցային միջավայրի պահպանման սկզբունքից՝ առաջարկում ենք այս փոփոխություններից ևս զերծ մնալ առնվազն այս փուլում:

5. «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի *«նվիրատվությունների առավելագույն սահմանաչափը չի ներառում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում նախընտրական հիմնադրամներին կատարված նվիրատվությունները»* դրույթի հետևանքով կարող են առաջանալ խնդիրներ: Օրինակ՝ կուսակցությունները կարող են իրենց ֆինանսների հայթայթման առավել արդյունավետ մեթոդները, օրինակ՝ խոշոր դրամահավաքները, կիրառել նախընտրական ժամանակահատվածում՝ դրանով գեներացնելով գումար, որը չի ազդի կուսակցությունների համար նախատեսված տարեկան սահմանաչափի վրա: Մեկ այլ դեպքում, մեկ տարվա ընթացքում, օրինակ՝ 10 համայնքային ընտրությունների պարագայում, մեկ անձը, կարող է կուսակցությանը փոխանցել 10 մլն ՀՀ դրամ

¹ <https://armstat.am/am/?nid=12&id=08001>

(յուրաքանչյուր ընտրության համար 1 մլն ՀՀ դրամ ըստ առաջարկվող սահմանաչափի), որը ներառված չի լինի անձի՝ կուսակցությանը նվիրատվություն անելու տարեկան 2,5 մլն ՀՀ դրամ (կամ թեկուզ առաջինից երկրորդ ընթերցում առաջարկվող 10 մլն ՀՀ դրամ) սահմանաչափի մեջ: Այսպիսի ձևակերպումը հնարավորություն է տալիս կուսակցություններին նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հավաքել զգալի գումարներ՝ օրինակ 100 մլն ՀՀ դրամ մեկ համայնքի ընտրությունների համար: Սակայն, քանի որ մինչև 25,000 և 25,000+ ընտրող ունեցող (բացի Երևանից) համայնքներում համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 139-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանված է ծախսերի սահմանաչափ՝ համապատասխանաբար 40 մլն ՀՀ դրամ և 60 մլն ՀՀ դրամ, կուսակցությունը կարող է հավաքագրած մնացորդային գումարը պահել իրեն՝ չծառայեցնելով նախընտրական քարոզչության ծախսերին, քանի որ որևէ վերահսկողական մեխանիզմ առկա չէ, որով կերաշխավորվի քարոզչության ժամանակահատվածում ստացված նվիրատվությունների՝ ամբողջությամբ նախընտրական հիմնադրամին փոխանցելը: Այսպիսով, կուսակցությունը հնարավորություն է ստանում շրջանցելու 500 մլն-ի կամ ցանկացած այլ սահմանված տարեկան սահմանաչափը: Այս օրենսդրական բացը կարիք ունի ուսումնասիրման ու հասցեագրման:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է «ՀՀ ընտրական օրենսգրք» սահմանադրական օրենքի փոփոխությունների համատեքստում չդիտարկել «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում առաջարկվող փոփոխությունները՝ դրանց ոչ բավարար հիմնավորված լինելու պատճառով:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը երբևէ վերանայելու պարագայում անհրաժեշտ է ձևակերպել պահանջ և նախատեսել համակարգ, որպեսզի կուսակցությունների մուտքերը առցանց կենդանի ռեժիմով հրապարակվեն, որը կլուծի կուսակցությունների նկատմամբ վերահսկողության և կուսակցությունների բարեվարքության բազմաթիվ խնդիրներ:

«ՀՀ ընտրական օրենսգրք» սահմանադրական օրենք

6. Ընտրական օրենսգրքի փոփոխությունների [Կ-927-26.09.2024-ՊԻ-011/1](#) նախագծի առաջինից երկրորդ ընթերցում փուլում պատգամավոր Ա. Մանավազյանի կողմից ՀՀ ընտրական օրենսգրքի նոր 55.4 հոդվածով առաջարկվում է լրացնել *«Կենտրոնական ընտրական հանձնաժողովում (այսուհետ՝ ԿԸՀ) ծառայությունը քաղաքացիական ծառայություն է, որը կարգավորվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, եթե սույն օրենսգրքով առանձնահատկություններ սահմանված չեն»* դրույթը: Նշված հոդվածի հիմնավորումներ բաժնում ԿԸՀ-ի առանձնահատկությունները հիմնավորվում է *«.....Կենտրոնական ընտրական հանձնաժողովում՝ որպես սահմանադրական կարգավիճակ ունեցող անկախ պետական մարմնում քաղաքացիական ծառայության առանձնահատկությունները՝ հիմքում ունենալով այն մոտեցումները, որոնք Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի հիման վրա սահմանվել է սահմանադրաիրավական նույն կարգավիճակ ունեցող մարմնի՝ ՀՀ Հաշվեքննիչ պալատի նկատմամբ: Սույն կետում*

Նշված առաջարկություններում արտացոլված մոտեցումները հետապնդում են անկախ պետական մարմինների նկատմամբ միատեսակ մոտեցում ապահովելու նպատակ:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի առանձնացումը մյուս անկախ սահմանադրական պետական մարմինների և ինքնավար պետական մարմինների ցանկից՝ այս մարմինների համեմատ հավելյալ քաղաքացիական ծառայության առանձնահատկությունների սահմանմամբ հիմնավորված և արդարացված չէ հետևյալ պատճառաբանությամբ: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի գործողությունը տարածվում է (...) դատական իշխանության մարմիններում, դատախազությունում, քննչական մարմիններում, անկախ պետական մարմիններում, ինքնավար մարմիններում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում (...) քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա: Հաշվի առնելով անկախ պետական մարմինների կարգավիճակը և դրանց լիարժեք ինքնավարության ապահովման անհրաժեշտությունը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը, իսկ առանձին դեպքերում նաև համապատասխան մարմինների գործունեությունը կարգավորող օրենքները սահմանում են որոշակի առանձնահատկություններ նշված մարմիններում քաղաքացիական ծառայության իրականացման և քաղաքացիական ծառայության գրասենյակի և/կամ այլ պետական մարմինների ներգրավվածության մասով, ինչը միանշանակորեն ընդունելի է նշված մարմինների կարգավիճակի առանձնահատկությունների հաշվի առնմամբ:

Մինույն ժամանակ, խիստ խնդրահարույց ենք համարում հավելյալ արտոնությունների և առանձնահատկությունների սահմանումը ԿԸՀ-ում քաղաքացիական ծառայության կարգավորման առումով՝ ի համեմատ այլ սահմանադրական անկախ պետական մարմինների և ինքնավար պետական մարմինների: Որևէ կերպ հիմնավորված չէ ԿԸՀ-ի առանձնացումը համանման կարգավիճակ ունեցող այդ մարմինների ցանկից: Բնականաբար, նաև այդ առաջարկը չի բխում բոլոր անկախ և ինքնավար պետական մարմինների, այդ թվում՝ սահմանադրական կարգավիճակ ունեցող մարմինների նկատմամբ միատեսակ մոտեցում ապահովելու նպատակից, ինչպես որ ներկայացվում է նշված առաջարկի հիմնավորմամբ: Բացի այդ, ԿԸՀ-ի առանձնացումը ստեղծում է նախադեպ մյուս անկախ և ինքնավար մարմինների համար, որոնք կարող են յուրաքանչյուրն իր հերթին իր համար առաջ մղել քաղաքացիական ծառայության հատուկ կանոններ՝ մյուս անկախ մարմինների համեմատությամբ:

Բոլորովին հիմնավորված չէ նաև ԿԸՀ աշխատակազմի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների և ՀՀ հաշվեթևիչ պալատի աշխատակազմի համանման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության տեսակների և գործառույթների համեմատությունը, ինչպես նաև ԿԸՀ կարգավիճակի նույնացումը հենց ՀՀ հաշվեթևիչ պալատի հետ:

Առաջարկում ենք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նկատմամբ կիրառել նույնական մոտեցում, որն օրենսդիրը կիրառում է մյուս բոլոր անկախ պետական մարմինների, այդ թվում՝ սահմանադրական մարմինների, ինքնավար պետական

մարմինների նկատմամբ՝ առանց հավելյալ հատուկ և արտոնյալ կարգավորումների սահմանման, ինչը կապահովի օրենսդրի միատեսակ մոտեցումը բոլոր համանման կարգավիճակ ունեցող պետական մարմինների նկատմամբ: Բոլոր առանձնահատուկ կարգավորումները և լրացուցիչ արտոնությունները, որոնք տարբերվում են մյուս բոլոր անկախ սահմանադրական պետական մարմիններում (օրինակ՝ ՄԻՊ-ում) և ինքնավար պետական մարմիններում (օրինակ՝ ԿԿՅ-ում) քաղաքացիական ծառայության առանձնահատկությունների կարգավորումներից, ենթակա են բացառման նախագծից:

7. Ընտրական օրենսգրքի նախագծով առաջարկվում է Օրենսգրքի 58-րդ հոդվածը լրացնել հետևյալ՝ 5-րդ մասով. *«Ընտրությունների ժամանակ տեսողության խնդիրներ ունեցող անձանց կողմից ինքնուրույն քվեարկելու համար տեղամասային ընտրական հանձնաժողովներն ապահովվում են լրացուցիչ միջոցներով (բրայյան կաղապարներով եւ այլն), իսկ մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի ընտրությունների ժամանակ՝ նաեւ խոշորացույցներով: Լրացուցիչ միջոցների ձեռքբերումը, այդ թվում՝ բրայյան կաղապարների տպագրությունը, ու խոշորացույցների ձեռքբերումն ապահովվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»*: Պատգամավոր Ա. Մանավազյանի կողմից առաջարկվում է Նախագծից հանել բրայյան կաղապարների և խոշորացույցների վերաբերյալ նշումները՝ հիմնավորելով նրանով, որ անհրաժեշտ չէ լրացուցիչ միջոցների կիրառումը սահմանափակել կոնկրետ թվարկումով: «Այդ դեպքում ԿԸՅ-ն հնարավորություն կունենա առկա հնարավորությունների շրջանակներում ապահովելու տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար այդ պահին առավել արդիական և արդյունավետ լուծումները»:

Նշված առաջարկը դիտարկում ենք խիստ խնդրահարույց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանով ԿԸՅ-ին ուղղակի հայեցողություն է վերապահվում համապատասխան միջոցների ընտրության հարցում՝ չսահմանափակելով վերջինիս որևէ հստակ և նվազագույն միջոցի ապահովման պարտականությամբ: Նախագիծը սահմանում է նվազագույն միջոցների ապահովման պահանջ, որը ենթադրում է, որ առնվազն բրայյան կաղապարները և խոշորացույցները պետք է հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղամասերում քվեարկություն իրականացնելիս՝ անկախ ԿԸՅ-ի հայեցողությունից, միևնույն ժամանակ չսահմանափակելով այլ լրացուցիչ միջոցների տրամադրման հնարավորությունները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք պահպանել Նախագծում առկա իրավակարգավորումը լրացուցիչ միջոցների շարքում բրայյան կաղապարների և խոշորացույցների թվարկման միջոցով՝ սահմանելով նաև, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաշմանդամություն ունեցող անձանց քվեարկության ապահովման համար կարող է կիրառել նաև այլ տեխնոլոգիական լուծումներ:

8. ՀՀ ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ սահմանված կարգով ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից տեսանկարահանվում և հեռարձակվում են նաև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերը և վերահաշվարկը: Նախագծով առաջարկվում է սահմանափակել տեսանկարահանվող և

հեռարձակվող նիստերի շրջանակը՝ միայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների՝ արդյունքների ամփոփման նիստերով և վերահաշվարկով: Այսինքն, Նախագծով սահմանվում են գործող իրավակարգավորման համեմատությամբ հետընթաց կարգավորումներ, որոնք հակասում են ընտրական գործընթացների հրապարակայնության և թափանցիկության պահանջներին և նահանջ են գոյություն ունեցող ժողովրդավարական ձեռքբերումներից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս նիստերի հրապարակայնությունը կարևոր նշանակություն ունի հանձնաժողովի գործունեության նկատմամբ հանրային վերահսկողության ապահովման, հանձնաժողովի կողմից ստացված դիմում-բողոքների քննության թափանցիկության և առհասարկ հանձնաժողովի գործունեության ընթացքում հնարավոր խախտումների կանխարգելման տեսանկյունից:

Առաջարկում ենք ընտրական օրենսգրքի նախագծից բացառել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների՝ տեսակարահանվող և հեռարձակվող նիստերի շրջանակը սահմանափակող և գործող օրենսդրության համեմատությամբ խիստ հետընթաց կարգավորումը:

9. Նախագիծը սահմանում է տարբեր կարգավորումներ ընտրությունների նշանակումից հետո արտակարգ և ռազմական դրության հայտարարման դեպքում իրականացվող գործողությունների վերաբերյալ: Առաջարկվող տարբերակն արժանացել է քննադատության տարբեր քաղաքական ուժերի կողմից, ինչպես նաև ստացել է Վենետիկի հանձնաժողովի մի շարք դիտարկումներ:

Հաշվի առնելով, որ արտակարգ կամ ռազմական դրություններն իրենց բնույթով արտառոց են, և ամբողջական ու համաչափ կարգավորումը դժվար է՝ առաջարկում ենք շարունակել քննարկումը սցենարների պլանավորման մեթոդի կիրառմամբ՝ շահագրգիռ կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ:

10. Ընտրական օրենսգիրքը սահմանում է որ համամասնական ընտրակարգով ընտրությունների մասնակցող կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը պետք է ապահովի երկու սեռերի առնվազն 30 տոկոս ներկայացվածությունն այնպես, որ թեկնածուների յուրաքանչյուր եռյակում որևէ սեռի ներկայացուցիչների թիվը չգերազանցի 70 տոկոսը: Խմբակցությունների դեպքում օրենսգիրքը սահմանում է, որ եթե երկու սեռերի ներկայացվածության համամասնությունը խախտվում է թեկնածուի ինքնաբացարկի կամ մանդատը վայր դնելու պատճառով, ապա մանդատը փոխանցվում է պակաս ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին, եթե կա: Այս կարգավորման չարաշահման արդյունքում մի քանի համայնքների ավագանու ընտրություններից հետո ինքնաբացարկ են հայտնել բոլոր կամ գրեթե բոլոր կանայք՝ մանդատները զիջելով տղամարդկանց: Ընտրական օրենսգրքի փոփոխությունների այս նախագծի նախնական տարբերակը պարունակում էր կարգավորում, ըստ որի եթե պակաս ներկայացված սեռի թեկնածու այլևս չկա, ապա մանդատը փոխանցվում է ոչ թե մյուս սեռի հաջորդ թեկնածուին, այլ մնում է թափուր: Նախագծի այս կարգավորումը կանխարգելիչ նպատակ ուներ պաշտպանելու

համամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու կազմում սեռերից յուրաքանչյուրի՝ առնվազն 30 տոկոս ներկայացվածությունը:

Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված նախագծից այս կարգավորումը հանվել է: Քրեական օրենսգրքի փոփոխությունների նախագծում առկա է պատասխանատվություն մանդատից հրաժարվելու հարկադրելու համար: Սակայն այս կարգավորումը վստահաբար չի կարող նույն կանխարգելիչ գործառույթն ունենալ:

Առաջարկում ենք Նախագծում վերականգնել կարգավորումն, ըստ որի եթե մեկ սեռի ներկայացուցչի ինքնաբացարկի կամ մանդատից հրաժարվելու դեպքում տվյալ սեռի ներկայացուցիչների թիվը պակասում է 30 տոկոսից, ապա մանդատը փոխանցվում է նույն սեռի հաջորդ թեկնածուին: Իսկ եթե նույն սեռի այլ ներկայացուցիչ չկա, ապա մանդատը մնում է թափուր:

Միաժամանակ, առաջարկում ենք Ընտրական օրենսգրքում հնարավորինս սեղմ ժամկետներում դիտարկել լրացուցիչ փոփոխությունների ընդունումը, որոնք էական են ազատ և արդար ընտրակարգ և ընտրությունների միջոցով ձևավորվող բարեվարք ինստիտուտներ ունենալու նկատառումներով:

11. Կեղծ համամասնական ընտրակարգի վերացում

Փորձագետները բազմիցս բարձրաձայնել են, որ ՀՀ սահմանադրության 89-րդ հոդվածով ամրագրված «կայուն մեծամասնության» սկզբունքն աղճատում է խորհրդարանական ընտրակարգը և փաստացի հաստատում մեկ քաղաքական ուժի գերիշխանություն, ինչը բացասական ազդեցություն է ունենում խորհրդարանի գործունեության, ընդդիմության իրավունքների ապահովման, քաղաքական բևեռացման, փոխզսպումների և հակակշռման մեխանիզմների տեսանկյունից՝ անդրադառնալով ընդհանուր քաղաքական համակարգի ու երկրի կառավարման որակի վրա:

ՀՀ ընտրական օրենսգրքի 96-րդ և 98-րդ հոդվածներով ամրագրվում են Ազգային ժողովի երկփեղկման, առճակատման ու ավտորիտար կառավարման հետագա հիմքերը՝ սահմանափակելով ընտրությունների երկրորդ փուլում քաղաքական կոալիցիաներ ձևավորելու հնարավորությունը, ամրապնդելով դոմինանտության սկզբունքով կառավարելու հիմքերը և նվազեցնելով քաղաքական երկխոսության ու գործակցության հնարավորությունը:

Հերթական անգամ առաջարկում ենք դիտարկել ՀՀ Ազգային ժողովի կողմից քվեարկությամբ ՀՀ սահմանադրական փոփոխությունների իրականացման հնարավորությունը: Հակառակ դեպքում, առաջարկում ենք ՀՀ ընտրական օրենսգրքում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք կնվազեցնեն ավտորիտար կառավարման համակարգի ձևավորման հնարավորությունները գործող սահմանադրական կարգավորումների շրջանակներում:

Համամասնական ընտրակարգի տրամաբանությանը և ոգուն համահունչ կլիներ ընտրական անցողիկ շեմի նվազեցումը՝ ընդհուպ մինչև տվյալ ընտրություններում մեկ մանդատ ստանալուն բավարարող քվեների տոկոսը: Նման փոփոխությունը կավելացներ խորհրդարանի ներկայացուցչականությունը և կնպաստեր քաղաքական դաշտի պլուրալիզացմանը, ինչպես նաև կնվազեցներ բարձր ընտրական շեմերի պատճառով ընտրողների ձայների փոշիացման վտանգը: Ինչն առավել կարևոր է, շեմերի նվազեցումը պակաս հավանական կդարձներ «կայուն մեծամասնության» հակաժողովրդավարական նորմի կիրառումը:

12. Շահերի համակարգային բախման վերացում ՏԻՄ-ում

Գործող կարգավորումներով համայնքի ղեկավարը և տեղակալը միաժամանակ ավագանու անդամ են: Երբ համայնքի ղեկավարը ավագանու նիստին է ներկայացնում կարևորագույն որոշումների և կատարողականների նախագծեր (բյուջե, հաստիքացուցակ, հնգամյա զարգացման ծրագիր, տարեկան աշխատանքային պլան, ՀՈԱԿ-ների հաստիքացուցակներ, տեղական տուրքերի ու վճարների դրույքաչափեր և այլն), թե՛ համայնքի ղեկավարը, թե՛ առաջին տեղակալը կողմ են քվեարկում դրանց, առաջանում է շահերի ինստիտուցիոնալ բախման իրավիճակ:

Ինստիտուցիոնալ շահերի բախման այս իրավիճակից խուսափելու ավելի արմատական լուծում է համայնքի ղեկավարի և ավագանու ինստիտուտների տարանջատումը և փոխկապակցվածության պրակտիկայի վերացումը (տեղական ինքնակառավարման բարեփոխումների համատեքստում կարող են քննարկվել տարբեր մոդելներ): Ընդ որում, գործող պրակտիկայում ոչ թե համայնքի ղեկավարն (գործադիր) է կախվածության մեջ ավագանուց (օրենսդիր), այլ ընդհակառակը՝ ավագանին է սպասարկում համայնքի ղեկավարի օրակարգերը, որն աղճատում է ժողովրդավարական մոդելի տրամաբանությունը:

13. Կուսակցությունների ընտրական ցուցակներ

Կուսակցության ընտրական ցուցակում որևէ այլ կուսակցության ղեկավար մարմնի կազմից որևէ ներկայացուցիչ կամ որոշակի թվով (օրինակ՝ մինչև 10%) այլ անդամներ ներառելու պարագայում պետք է նախատեսել կուսակցությունների դաշինքով հանդես գալու հստակ պահանջ:

Կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում տվյալ կուսակցության անդամ հանդիսացող թեկնածուների ինքնաբացարկի դեպքում պետք է նախատեսել մեխանիզմ, որով կապահովվի օրենքով կուսակցության անդամ չհանդիսացող անձանց համար սահմանված առավելագույնը 30% շեմը:

14. Խախտումների և քվեարկության արդյունքների բողոքարկման մեխանիզմներ

Առաջարկում ենք ՀՀ ընտրական օրենսգրքով և հարակից օրենսդրությամբ իրավունք ընձեռել ՀՀ քաղաքացիներին և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին բողոքարկելու ընտրական հանձնաժողովների որոշումները և գործողությունները, անօրինական քարոզչության դրսևորումները և ընտրությունների

արդյունքները: Այս հանձնարարականն ամրագրված է ինչպես Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրի [քաղաքական գեկուցում](#), այնպես էլ 2016 թ. ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ [համատեղ կարծիքում](#) և Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված տարբեր ընտրությունների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից դիտորդական առաքելությունների գեկույցներում՝ մասնավորապես շեշտելով, որ Հայաստանի Հանրապետությունը չի կատարել բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի ընդլայնման վերաբերյալ տրված հանձնարարականը:

Առաջարկվում է ճանաչել դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը դիտորդի կարգավիճակից բխող իրավունքների խախտման վերաբերյալ գործերով, ինչպես նաև սահմանել դիտորդի և դիտորդական կազմակերպությունների կողմից օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավունքը: Պետք է քննարկման առարկա դարձնել նաև քվեարկության/ընտրությունների արդյունքները անմիջականորեն ընտրողների և դիտորդական կազմակերպությունների կողմից վիճարկելու իրավունքի սահմանում:

Այս առաջարկն անմիջականորեն բխում է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից, որով նախատեսվում է հասարակական կազմակերպությունների համար դատարան դիմելու իրավունքի սահմանման գործողությունը հանրային նշանակության, կարևորության հարցերով, հաշվի առնելով *actio popularis* սկզբունքը:

Հարկավոր է վերանայել նաև Ընտրական օրենսգրքով սահմանված բողոքարկման և ընտրական հանձնաժողովների կողմից որոշումների կայացման ժամկետներին վերաբերող իրավակարգավորումները, որոնց ուժով փաստացի բացառվում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը ԸԸՀ-ների որոշումների դեմ ներկայացված դիմում-բողոքների քննությունը:

15. Գործընթացների թափանցիկություն

Առաջարկվում է սահմանել պահանջ, որ նախընտրական քարոզարշավի համատեքստում կուսակցությունների կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքված ծառայությունների մատուցման բոլոր պայմանագրերը հրապարակվեն կամ հասանելի դառնան դիտորդական կազմակերպություններին:

Անհրաժեշտ է սահմանել ԸԸՀ անդամների կենսագրականները ԿԸՀ համացանցային կայքում հրապարակելու պահանջ՝ հաշվի առնելով ԸԸՀ-ների դերը և հրապարակել ԸԸՀ անդամների հիմնական աշխատավայրի վերաբերյալ տվյալները՝ երաշխավորելու անհամատեղելիության պահանջների նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Պետք է նախատեսել քվեարկության օրվա տեսագրությունների հասանելիությունը ԿԸՀ կայքում քվեարկությունից հետո՝ առնվազն մինչև ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտը:

Ցանկալի է ապահովել ԿԸՀ կայքում հրապարակվող ընտրողների ստորագրված ցուցակներում ստորագրությունների սյան ծածկումը՝ հաշվի առնելով, որ ընտրական հանձնաժողովի անդամի կողմից համապատասխան սյունակում անհատական կնիքի առկայությունը արդեն իսկ վկայում է տվյալ ընտրողի՝ քվեարկությանը մասնակցելու փաստի մասին:

16. Վարչական ռեսուրսի օգտագործում

Առաջարկվում է սահմանափակել զարգացման/տարեկան ծրագրերից չբխող՝ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորումը հերթական ընտրություններից առնվազն վեց ամիս առաջ, բացառությամբ արտակարգ իրավիճակների, որի վերահսկողության նպատակով հարկավոր է, որ մարզպետարանները և տեղական ինքնակառավարման մարմինները քվեարկության օրվա նախորդող 6 ամիսներին ընթացքում ներկայացնեն համեմատական հաշվետվություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ իրականացված ծախսերի, ներված պարտավորությունների, օտարումների, կապիտալ վերանորոգումների և սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ:

Հարկավոր է սահմանել պետական և համայնքային բյուջեներով նախապես չպլանավորած միջոցների, այդ թվում՝ կենսաթոշակների, նպաստների, դրամական օգնությունների նախատեսման կամ դրանց չափի ավելացման կամ պարտքերի մարման արգելք՝ առնվազն ընտրություններ նշանակելու մասին որոշումն ընդունելու պահից սկսած՝ բացառությամբ չնախատեսված և հրատապ լուծում պահանջող միջոցառումների՝ ստանալով վերահսկող ներկայացուցչական մարմնի (ՀՀ Ազգային ժողովի, համայնքի ավագանու) որոշումը:

Նախատեսել ԿԸՀ գործառույթ՝ սեփական նախաձեռնությամբ և դիմումների հիման վրա ուսումնասիրելու և գնահատելու, թե արդյոք նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող առանձին գործողություններն ու ծախսերը ենթակա են որակման որպես նախընտրական քարոզչություն և նախընտրական ծախս:

Սահմանել պաշտոնատար անձանց կողմից նախընտրական քարոզչությունը պաշտոնական գործուղումների հետ համատեղելու, ինչպես նաև գործուղման ավարտից հետո տվյալ մարզի կամ համայնքի տարածքում քարոզչություն անելու հստակ արգելք:

Արգելել համատիրությունների ղեկավարների կողմից քարոզչության իրականացումը աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս:

17. Երրորդ անձանց ներգրավում

Առաջարկվում է սահմանել նախընտրական քարոզարշավում ներգրավվող «երրորդ անձ» եզրույթը՝ ներառելով առնվազն այն իրավաբանական անձանց (հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ և այլն), որոնց անվանումները ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են կուսակցությունների անվանման հետ, կամ որոնց ղեկավար կազմի անդամները ամբողջությամբ կամ մասամբ կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմինների անդամներն են, նաև այն իրավաբանական անձանց, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրենց գործունեության ընթացքում իրականացնում են նախընտրական քարոզչություն կամ հակաքարոզչություն:

Անհրաժեշտ է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում սահմանափակել ու հաշվետու դարձնել երրորդ անձանց կողմից իրականացվող ծախսերը և ֆինանսական աղբյուրները:

Հարկավոր է սահմանել նախընտրական քարոզարշավում ներգրավվելու նպատակով օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից, օտարերկրյա իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից նվիրատվություններ ստանալու կամ ստացված նվիրատվությունները նախընտրական քարոզչության նպատակով օգտագործելու արգելք նաև երրորդ անձանց համար:

18. Կուսակցության և թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրեր

Սահմանել ԿԸՀ-ին կուսակցության և թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրեր ներկայացնելու պահանջի խախտման պատասխանատվություն: Երաշխավորել կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրերի համադրումը կուսակցությունների տարեկան հաշվետվությունների հետ և անհամապատասխանությունների վերհանման դեպքում վարույթների հարուցումը:

«Ականատես» դիտորդական առաքելություն

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ
Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
«Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամ

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինք

Հելսինկյան Զաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Իրազեկ քաղաքացիների միավորում